ՀՏԴ 159.9-05
Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ԱրՊՀ, Հոգեբանության ամբիոն, հ.գ.թ.

ՆԺԴԵՀԸ՝ ՀՈԳԵԲԱՆ

Նժդեհի գաղափարների հենքը պաշտամունքն է՝ հայրենապաշտություն, ցեղապաշտություն, լեզվա-, զոհա-, նախնիա-, առաջնորդա-, ուժապաշտություն, որոնք խոսուն ձևով արտահայտվել են նրա ասույթներում՝ «Հաղթում է ուժեղը, ոչ արդարը», «Լինել ուժեղ, ավելի ուժեղ, միշտ ուժեղ», «Ուժն է ծնում իրավունքը»:
Նժդեհի այս և բազմաթիվ այլ ասույթներ այսօր թևավոր խոսքեր են: Միայն մեծ հոգեբանը կարող էր ասույթներով ստեղծել մի ուսմունք, որով կառաջնորդվեն իր ազգի հետագա սերունդները:
Բանալի բառեր՝ *Նժդեհ, հոգեբան, գաղափարախոսություն, հոգեվերլուծություն, գեշտալտ հոգեբանություն, հումանիստական հոգեբանություն:*

В. Ярамишян

НЖДЕ-КАК ПСИХОЛОГ

В статье автор попытался логически развивать точку зрения о том, что армянский политический и государственный деятель начала 20-го века Гарегин Нжде, будучи признанным философом, военачальником, политиком, экономистом и реформатором национальной идеологии, в своей бурной, неоднозначной деятельности вполне проявил себя еще и как психолог. Психологические рассуждения и философские обобщения, сделанные Гарегином Нжде, полностью соответствуют статусу профессионального психолога с точки зрения теорий психоанализа З.Фрейда, гештальт психологии и гуманистической теории личности.
Ключевые слова: *Нжде, психолог, идеология, психоанализ, гештальт-психология, гуманистическая психология.*

V.Yaramishyan

NZHDEH AS A PSYCHOLOGIST

In this article, the author puts forward and attempts to logically develop the point of view that Garegin Nzhdeh, the Armenian political and state leader of the early 20th century, as a recognized philosopher, military leader, politician, economist and reformer of the national ideology, in his turbulent ambiguous activity fully manifested himself as a psychologist. Psychological reasoning and philosophical generalizations made by Garegin Nzhdeh fully correspond to the status of a professional psychologist from the point of view of the theories of psychoanalysis by S. Freud, Gestalt Psychology and the Humanistic Theory of Personality.
Keywords:*Nzhdeh, psychologist, ideology, psychoanalysis, Gestalt Psychology, Humanistic Psychology.*

«Գարեգին Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր հիրավի պատմաստեղծ կյանքով հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը»,- այսպես է բնութագրում Գարեգին Նժդեհին նրա կենսագիր Մուշեղ Լալայանը[1]: Թերևս պետք է համաձայնել կենսագրի տված գնահատականի հետ այն առումով, որ Նժդեհը միաժամանակ թե՛ բարոյախոս էր, թե՛ փիլիսոփա, թե՛ քաղաքական և ռազմական գործիչ: Նժդեհի գործունեության մեկ այլ հետազոտող Ռաֆայել Համբարձումյանը նույնպես բարձր է գնահատել Նժդեհի համակողմանի զարգացածությունն ու արդյունավետ գործունեությունը: Նա գրում է. «Մեծ է Գարեգին Նժդեհի դերը հայոց պատմության մեջ: Նա քսաներորդ դարի առաջին կեսի համաշխարհային իմաստագիտության կարկառուն դեմքերից է, այդ շրջանի պետական ու քաղաքական խոշորագույն գործիչներից և ժամանակի մեծ զորահրամանատարներից ու ռազմարվեստի տեսաբաններից մեկը: Գարեգին Նժդեհը 20-րդ դարի մեր խոշորագույն հրապարակախոսն է, հռետորը, պետության ղեկավարը, հայոց նոր ***ռազմահոգեբանության հիմնադիրը*** (ընդգծումը մերն է)**,** 20-րդ դարի հայոց առաջին սահմանադրության հեղինակն ու կիրարկողը, հայերենի լեզվառաձն ու բառապաշարը հարյուրավոր նորակերտություններով հարստացրած տաղանդավոր գրող-արվեստագետը և, վերջապես, Հայոց Ոսկեդարի ծնունդ ազգային գաղափարախոսության ինքնապաշտպանական համակարգի՝ Մամիկոնեից ուխտի վերածնողն ու նոր ժամանակներին ագուցող տեսաբան-իրագործողը...»[2]:

Եթե շարունակենք մեր դատողությունները Նժդեհի կերպարի վերաբերյալ ոչ միայն Մուշեղ Լալայանի, Ռաֆայել Համբարձումյանի, այլ նաև մյուս ուսումնասիրողների կողմից տրված գնահատականների համեմատական վերլուծություն կատարելու ուղղությամբ, ապա բազմաթիվ տեսակետների, կարծիքների ու երբեմն նույնիսկ մերժողական դիրքորոշումների[3] բազմազանության մեջ կարելի է կարմիր թելի նման հստակ ուրվագծել հետևյալ տրամաբանությունը. Նժդեհի անձի մեջ անվիճելիորեն միաձուլվել են ինքնամոռաց հայրենասերը, հմուտ զորավարը, համոզված գաղափարախոսը, ճկուն քաղաքագետը, խորամիտ փիլիսոփան, նույնիսկ՝ տնտեսագետը: Այս տեսանկյունից, բնավ չհավակնելով Նժդեհի բարդ կերպարի վերաբերյալ նոր խոսք ասելու

---

[1] ***Նժդեհ Գ.,*** *Հատընտիր: Երկրորդ հրատարակություն-Երևան, Հայաստան, 2001, էջ 3:*

[2] *Տե՛ս* ***Համբարձումյան Ռաֆայել,*** *Գարեգին Նժդեհ (ինքնակենսագրություն և կենսատարեգրություն), Հայրենիքի մարտիկ, 1-2009 , ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009, էջ 40-41:*

[3] *Նժդեհին ոմանք մեղադրում էին ծայրահեղ ազգայնականության, նույնիսկ հիտլերականության մեջ:*

դժվարին պարտավորությանը, սույն հոդվածում մենք կփորձենք տեսականորեն զարգացնել Ռաֆայել Համբարձումյանի արտահայտած այն միտքը, որ Նժդեհը հայոց ռազմահոգեբանության հիմնադիրն էր: Մեր կարծիքն այն է, որ Նժդեհը հոգեբան էր՝ բառիս լայն իմաստով: «Լայն իմաստով հոգեբան» ասելով՝ նկատի ունենք այն, որ Նժդեհը հոգեբանական հատուկ-մասնագիտական կրթություն չի ստացել, որպես տվյալ ոլորտի ձևավորված մասնագետ՝ երբևիցե հանդես չի եկել: Նա, սակայն, իր աշխատություններում ձևակերպել ու հանրությանն է ներկայացրել այնպիսի մտքեր, թեզեր ու պնդումներ, որոնք աներկբա ու հաստատապես բնորոշ են մարդու հոգեկանի ձևավորման ու դրսևորման խնդիրներով զբաղվող մասնագետներին՝ հոգեբաններին: Համարձակվենք պնդել ավելին. Նժդեհը հայազգի առաջին և նշանավոր հոգեբաններից մեկն է եղել:

Առաջ գնալով Նժդեհ-հոգեբանի կերպարն ամբողջականացնելու ուղղությամբ, մեր առջև խնդիր դնելով նրա անձի մեջ գտնելու հոգեբանին բնորոշող նորանոր գծեր՝ կարելի է հետաքրքիր ու անսպասելի բացահայտումներ կատարել: Նախ, կարելի է զարմանալ, թե փոթորկալից կյանքով ապրող փոքրամարմին այդ մարդուն ե՛րբ և ինչպե՛ս հաջողվեց գրեթե ամբողջ ծավալով լիարժեք տիրապետել ժամանակի համաշխարհային փիլիսոփայության, քաղաքագիտության, մշակութաբանության, տնտեսագիտության, իրավագիտության և, մեր տեսանկյունից, նաև հոգեբանության, գիտելիքների կուտակված ծավալին: Չվախենալով սխալվելուց՝ թերևս ենթադրենք, որ նա այդ արել է 1906-1907 թթ-ին Բուլղարիայում, Սոֆիայի սպայական բարձրագույն դպրոցում սովորելու ժամանակ, երբ փոքր-ինչ հնարավորություն է ունեցել բարձրորակ ու համակարգված կրթություն ստանալու, ինչպես նաև 1922 թ. նույն Բուլղարիայում հաստատվելուց հետո, երբ որոշ չափով ազատ ժամանակ է ունեցել: Նկատենք, որ մինչ այդ Նախիջևանի ռուսական դպրոցն ավարտելուց հետո, Նժդեհը սովորել է նաև Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, հետագայում՝ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժնում, որը, սակայն, չի ավարտել՝ ցարիզի դեմ տարվող պայքարում ակտիվորեն ներգրավվելու պատճառով[1]:

Հայտնի է, որ Նժդեհի անունն անգամ հիշատակելը խորհրդային համայնավարական իշխանության օրոք հավասարազոր է եղել ազգայնականության մեջ մեղադրվելու ծանրագույն հանցագործությանը: Մեր օրերում՝ անկախությունից հետո մինչև 2018թ. իշխանափոխությունը, իշխող Հանրապետական կուսակցության կողմից որդեգրած գաղափարական ելակետերը պետության կողմից իրականացվող քաղաքականության աստիճանի հասցված և ջանադրաբար իրականացվող նպատակային քարոզչության, Նժդեհի կերպարի լայնամասշտաբ

[1] ***Նժդեհ Գ.,*** *Հատընտիր, էջ 3:*

հանրայնացման, այն որպես հայրանասիրության օրինակելի տիպար ներկայացնելու և այլ միջոցառումների շնորհիվ (կարծում ենք, դրան գումարվել է նաև կատարած գործերի համար Նժդեհին երախտապարտ ժողովրդի հավաքական հիշողությունը) նրա անունը առնվազն լսել էին կամ նրա ազգապահպան գործերի մասին տեղյակ էին գրեթե բոլորը, նրա ասույթներին, գաղափարներին ու մտքերին ծանոթ էին շատերը, և, չնայած Նժդեհի անվան մեծ ճանաչվածությանը, այնուամենայնիվ, քչերն էին խորապես հասկանում, որ Նժդեհի իրական մեծությունը ոչ միայն և ոչ այնքան նրա հայրենասիրական ասույթների, ոգեկոչող ճառերի ու տարած ռազմական հաղթանակների մեջ է, որքան մտավոր ոլորտում նրա ունեցած նվաճումների՝ խոհափիլիսոփայական ընդհանրացումների ու մարդկային գործունեության տարբեր ոլորտներին առնչվող զանազան արդիական, երբեմն նորոգչական ու հեղափոխական մտքերի մեջ: Նրա «Էջեր իմ օրագրէն», «Բանտային գրառումներ», «Անձնավկայություն», «Բաց նամակներ հայ մտավորականությանը», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Խորհրդածություններ պատմության մասին», «Իմաստասիրական խոհեր», «Անհատ և պետություն» և այլ աշխատությունները[1] իմաստասիրական մտքի փայլատակումներ են, իսկ «Մետապոլիտիկա» անավարտ աշխատությունը, ինչպես պնդում է Ռ.Համբարձումյանը, կարելի է համարել «քաղաքական ու հասարակագիտական մտքի անխամրելի հուշարձան: Ընդամենը մի քանի էջանոց այդ աշխատությունը բավական էր, որպեսզի Գարեգին Նժդեհը համարվեր ցայսօր մեզանում դեռևս ինքնուրույն գիտաճյուղ չդարձած քաղաքագիտության հայկական դպրոցի հիմնադիրներից մեկը և տեսաբանը»[2]:

Այնուհետև պատմությանը քաջ հայտնի է, թե որքան գաղափարական է եղել Նժդեհը և որքան անզիջում՝ իր դավանած սկզբունքներում, որքան խորը համոզված՝ իր հայացքներում: Այդ հողի վրա նա հաճախ սկզբունքային հակասություններ էր ունենում յուր ժամանակի մտածողների ու գործիչների հետ, որի արդյունքում էլ թերևս հետագայում ձեռնամուխ եղավ ու ձևակերպեց իր նոր՝ Ցեղակրոն ուսմունքը և նորոգեց Դավիթբեկյան ուխտերը: Սակայն, մեր կարծիքով, Նժդեհի մեծությունը ոչ միայն այն է, որ նոր ուսմունք է հեղինակել, այլ այն, որ, ի տարբերություն իր գաղափարական ընդդիմախոսների, կարողացել է վեր կանգնել նեղ կուսակցական, խմբակային մտածելակերպից ու առաջ քաշել այնպիսի գաղափարներ, որոնք ժամանակին ակտիվ դիմադրության չէին արժանացել և ընդունելի են եղել հայ իրականության մեջ գերիշխող ամենատարբեր հասարակական-քաղաքական հոսանքների համար:

---

[1] *Թվարկված աշխատությունները տես նույն տեղը, էջք 30-58, 58-77, 240-258, 258-274, 291-292:*

[2] *Տե՛ս **Համբարձումյան Ռաֆայել,** Գարեգին Նժդեհ (ինքնակենսագրություն և կենսատարեգրություն), Հայրենիքի մարտիկ, 1-2009 , ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009 :*

Նժդեհն իր գաղափարները չէր տարածում ու չէր հանրայնացնում այնքան ժամանակ, քանի դեռ չէր ամրապնդում իրական գործերով: Հանրահայտ է, որ հայրենասիրությունից խոսելուց առաջ իր բացառիկ խոհունության ու հայրենիքի շահն ամեն ինչից վեր դասելու ընդունակության շնորհիվ նրան հաջողվեց Վանի ֆիզիկապես և բարոյապես հյուծված բնակիչներին ինքնապաշտպանության կոչել և փաստացի փրկել բնաջնջումից, հուսալքված Սյունիքի պաշտպաններին մարտի առաջնորդել թուրք-թաթարական ու բոլշիկյան զորքերի դեմ և ազատել հայրենիքի այդ հատվածը Նախիջևանի ու Արցախի ճակատագրին արժանանալու գրեթե անխուսափելի թվացող հեռանկարից: Խոստովանենք, որ այդպես արդյունավետ ու հաջող կարող էր գործել միայն մարդու և, հատկապես, զանգվածների հավաքական հոգեկան երևույթների գաղտնիքներին խորությամբ տիրապետող անձնավորությունը: Եթե դատելու լինենք՝ հիմնվելով Նժդեհի ոչ թե վերացական մտքերի ու գաղափարների, այլ կատարած գործերի վրա, ապա կեզրակացնենք, որ նա օժտված էր նպատակամետ գործելու բնատուր տաղանդով: Նա գրեթե բոլոր բարդ իրավիճակներում չէր դավաճանում ինքն իրեն, որովհետև էությամբ առաջնորդ էր, ուներ տիտանական կամք ու վճռականություն: Սակայն պետք է նաև փաստենք, որ Նժդեհի կերպարի գրեթե սպառիչ նկարագիրը մեր սեղանին ունենալով հանդերձ՝ անհնար է չնկատել, որ Նժդեհ-հոգեբանի կերպարը պատմությունը քիչ է ուսումնասիրել:

Ազատագրված Սյունիքը, անշուշտ, Նժդեհի մատուցած ամենախոշոր ու շոշափելի ծառայությունն է հայ ազգին, սակայն, խնդիրը միայն ազատագրված տարածքը չէ, թեև գլխավոր խնդիրն է, այլ նաև այդ խնդրի լուծման ժամանակ արձանագրված հոգեբանական արդյունքն է՝ հուսալքված ու արդեն կրավորական կեցվածք որդեգրած ժողովրդին դիմադրության ոգի, սեփական ճակատագիրը սեփական ուժերով տնօրինելու և այլոց ողորմությանը չտրվելու կամք ու վճռականություն ներարկելու մեծագույն ծառայությունը:

Նժդեհն իր համար անելիքներ գտավ նաև նացիստական Գերմանիայում հակահայ տրամադրությունների առաջացման և ֆաշիզմի նորահայտ սպառնալիքների ահագնացման ժամանակ: «Այդ տարիներին Նժդեհի համար վերստին կարևորվում և հրատապ է դառնում հայությանը մոտեցող պատերազմին հոգեբանորեն նախապատրաստելու և նոր բարոյականով սպառազինելու խնդիրը»[1]: Հարցնենք ինքներս մեզ՝ այդ ինչպե՞ս պետք է հոգեբանորեն նախապատրաստեր, եթե չլիներ հոգեբան:

Պատմությունը վկայում է, որ վտանգավոր է օրհասական պահերին լինել ժողովրդի առաջնորդը: «Դյուրին բան չէ վարել ժողովրդին, որ բնազդական է, կույր, ապերախտ ու ապա երբեմն՝ հերոսական: Նա գիտե

[1] *Նույն տեղը, էջք 8-11:*

իր լավերին ու առաջնորդներին ոչ միայն մենակ թողնել, այլ նաև գցել սմբակների տակ, երբեմն էլ բարձրացնել կոտոշներից վեր: Այդպես է, և նա, ով կոչված է ղեկավարելու ժողովրդին, պետք է ունենա հավատի և կամքի մի անսպառ շտեմարան», -այսպես է Նժդեհի կատարած գործի կարևորությունը նկարագրել նրա ժամանակակից Գ.Նաիրյանը՝ 1921 թ-ին Գորիսում լույս տեսած և Նժդեհի հեղինակած «Խուստուփյան կանչեր: Զորաշարքային կանոնադրություն» գրքույկի համար գրված նախաբանում[1]:

Որքան էլ ժամանակակից հայեցակետից չխրախուսվի ռազմական, պետական, քաղաքական կամ ազգային գործչի կուսակցական պատկանելությունը, գաղափարայնությունն ու դրանում համոզվածությունը, այնուամենայնիվ Նժդեհի երրորդ խոշոր ծառայությունը պետք է համարել Տարոնական շարժումը և «Ցեղակրոն» ուսմունքի փաստացի հեղինակումը՝ Հայկ Ասատրյանի և Ն.Աստվածատուրյանի հետ[2]:

Պետք է նկատել, որ գործուն գաղափարախոսություն հեղինակելը ամենևին հեշտ գործ չէ: Ավելի հեշտ է առաջնորդվել ուրիշների ստեղծած ու հաջողված փորձով ամրապնդված պատրաստի գաղափարներով: Հարց է առաջանում՝ եթե այս ճշմարտությունը Նժդեհը լավ գիտեր, հապա ինչո՞ւ համարձակություն ունեցավ ձեռնամուխ լինելու այդ դժվարին առաքելությանը, որում մեծ էր ձախողվելու հավանականությունը: Կարծում ենք՝ նման պահվածքի գլխավոր դրդապատճառն այն էր, որ քննախույզ հայացք ունեցող Նժդեհը հասցրել էր նկատել հետևյալ իրողությունը. արևմտյան առաջադիմական համարվող գաղափարները, ազատամտությունն ու պրագմատիզմի վրա հենված բարոյախոսությունը բնավ չեն համապատասխանում հայ ժողովրդի պարկեշտ կենսափիլիսոփայությանը, իսկ արևելյան ադաթներն ու դոգմաները նման են զսպաշապիկի, խիստ նեղ են ու պահպանողական և արգելակում են հայ ազգի բնականոն զարգացումը:

Գարեգին Նժդեհի՝ որպես մտածողի ու հոգեբանի, կերպարի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել՝ շարունակելով հետևել Ռաֆայել Համբարձումյանի ուսումնասիրություններին[3]: Ինչպես պնդում է հեղինակը, Նժդեհը վճռականորեն մերժեց նշված երկու՝ արևմտյան և արևելյան գաղափարական ընկալումներն ու իր սևեռուն հայացքը հառեց Եվրոպայում դեռևս նոր մշակվող նորաձև, մոդայիկ հոսանքների վրա, որոնք, ուշադրություն դարձնենք, Զ.Ֆրեյդի և նրա հետևորդների կողմից առաջ քաշված հոգեվերլուծության, ինչպես նաև, ժողովուրդների հոգեբանության տեսակետից ազգային զարթոնքի ու

---

[1] *Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Խուստուփյան կանչեր: Զորաշարքային կանոնադրություն: Եր, Հայաստան, 1992, էջ 4:*

[2] ***Նժդեհ Գ,** Հատընտիր, էջ 11:*

[3] *Հայրենիքի մարտիկ, 1-2009, ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009 :*

վերանորոգչության խնդիրներն ուսումնասիրող, դրանք առաջ տանող, ժողովրդի, ցեղի ու անհատի հարաբերությունները կարգավորել ջանացող գերմոդայիկ գաղափարներ էին՝ հանձինս ժամանակի հեղինակների՝ Տոմաշ Մասարիկի, Ալֆրեդ Ֆուլյեի, Գաբրիել Տարդի, Անրի Բերգսընի և այլոց[1], այդ թվում, մեր կողմից ավելացնենք. Զ.Ֆրեյդի գաղափարների հետևորդ և անհատի ու ժողովուրդների հոգեբանության ճանաչված հետազոտողներ Ա.Ադլերի և Կ.Գ.Յունգի: Կ.Գ.Յունգը, օրինակ, իր տեսության մեջ հատուկ տեղ էր տալիս արքետիպերին ու անձի ռասայական, ֆիլոգենետիկական հատկություններին: Պատճառականության շրջանակներում նա շեշտը դնում է առասպելաբանության, կրոնի, հին սիմվոլիկայի, սովորույթների ու հավատի, ինչպես նաև հոգեկանում դրանց դրսևորումների՝ երազների, նևրոտիկ ախտանիշների, պատրանքների ուսումնասիրության վրա, քանի որ համոզված էր, որ մարդկային էությունը անհիշելի ժամանակներից մարդու նախնիների հավաքագրած փորձի արդյունք է: Յունգի կարծիքով՝ մարդը ծնվում է նախնիներից հաղորդված շատ նախահակվածություններով: Այդ հակումները կառավարում են նրա վարքը, մասամբ պայմանավորում են, թե ինչը նա պետք է գիտակցի և ինչին պետք է հակազդի իր կյանքի ընթացքում: Այլ կերպ ասած՝ կան նախապես ձևավորված ցեղային կոլեկտիվ հատկություններ, որոնք ընտրովի ներթափանցում են մարդու կենսափորձ, մոդիֆիկացվում (վերափոխվում) և զարգանում՝ ծագած ապրումների շնորհիվ: Այս գաղափարները խիստ համահունչ են Նժդեհի կողմից առաջ քաշվող Ցեղի ու ցեղի պաշտամունքի մտքերին[2]:

Այնուհետև, ըստ Ռ.Համբարձումյանի, ուսումնասիրելով հոգեվերլուծական տեսությունները, դրանք համադրելով Ղ.Ալիշանի, Ռաֆֆու, Ռ.Պատկանյանի, Դ.Վարուժանի, Ա.Ահարոնյանի ցեղաշունչ գաղափարների հետ, Նժդեհը (Հայկ Ասատրյանի համահեղինակությամբ) կարողացավ ստեղծել հոգեվերլուծական հայկական դպրոցը, որը, ցավոք, չհասցրեց խորությամբ մշակել: Նա ժամանակ չունեցավ հիմնավորապես շարադրելու իր մտքերը խոշոր աշխատությունների մեջ: Պատճառները բազմամազան են՝ միմյանց հերթագայող մարտական գործողություններ, անվտանգային խնդիրներ, ձերբակալություններ ու տեղաշարժվելու սահմանափակումներ, նույնիսկ՝ թղթի ու թանաքի պակաս: «Թղթի պակասության պատճառով բանտարկությանս առաջին տարիներին ես ակամա սկսեցի գրել ֆրագմենտալ, իսկ երբեն՝ սեղմասույթներով, որոնք ֆրագմենտալ բնույթ ունեն»[3]: Հայկ Ասատրյանը փաստում է, որ այս և այլ պատճառներով Նժդեհն իր մտքերը ձևակերպել է ֆրագմենտներով,

---

[1] *Հայրենիքի մարտիկ, 2-2009, ՀՀ ՊՆ հրատարակչություն, 2009, էջ 3:*
[2] https://hy.wikipedia.org/wiki-Կառլ *Գուստավ Յունգ, 23.01.2018:*
[3] *Նույն տեղը, էջ 3:*

աֆորիզմների տեսքով, այսինքն՝ նույն սկզբունքներով, որոնցով ստեղծվել են մեր խաչքարները, շարականները, մանրանկարները, որոնք փոքր չափերով ընդգրկուն խտացումներ են: Ահա թե ինչու Նժդեհին վստահաբար կարելի է դասել համաշխարհային աֆորիստիկայի (ասույթակերտության) խոշոր դեմքերի՝ Կոնֆիցիուսի, Շոպենհաուերի, Գյոթեի կողքին: Պետք է նկատել, որ «Նժդեհի ոճն է բեկորային, իսկ մտածողությունն ամբողջական է: Քչերը, շատ քչերն են խոսում, գրում կամ գործում արյունով ու ջղերով»-Նժդեհի մասին մի առիթով այսպես է ասել Հայկ Ասատրյանը[1]: Հետաքրքիր է, որ վերջինս, լինելով բարձրակիրթ փիլիսոփա և հոգեբան, փորձել է բնութագրել Նժդեհի անձը՝ նույն հոգեվերլուծության տեսակետից: «Հոգեբանութիւնը, բնազդների աշխարհը զատելով զուտ բանականությունից, նրան սահմանեց «ենթագիտակցական» բառով: Ենթագիտակցականը գիտակցութականից տարբերւում է նրանով, որ ոչ թէ ուսուցանում է, այլ ժառանգականօրէն փոխանցւում, ոչ թէ իմացական երեւույթ է, այլ կենսաբանական, ոչ թէ անհատական մտօրում է, այլ տեսակի խառնուածք, ոչ թէ մտքի ընդունակութիւն է, այլ արիւնի, ոչ թէ անցանելի է անհատի հետ, այլ զուգահեռ՝ սեռի յաւիտենականութեան»-գրում է Հայկ Աստրյանը՝ ներկայացնելով իր ըմբռնումը եվրոպական նորոգչական գաղափարների, անգիատակցականի, գիտակցության ու ենթագիտակցության հարաբերությունների մասին[2]:

Նժդեհի հոգեբանական կերպարի առաջին բնութագրիչը, ըստ վերլուծաբանի, նրա «բարձր խառնվածքն» է՝ հիմնված հոգեվերլուծական Super-ego-ի կամ «Գերեսի» վրա, կամ ինչպես Հ.Ասատրյանն է ասում՝ «համաեսի» վրա: «Նա ապավինում է ներգերբնականին, սակայն սեփական «ես»-ի փլուզման վտանգից սարսափած՝ իր համար ստեղծում է մի բնական պատվանդան, աստվածացնում է մի «համաես» և, համակվելով կրոնական զգացումով, թափանցում է ենթագիտակցության ոլորտը»:

Նժդեհի «համեսը» ցեղն է, ինչը շեշտում և երանգավորում է նրա խառնվածքը: Շարունակենք մեջբերել Հ.Ասատրյանին. «Ենթագիտակցականում անձնային «ես»-ը հանդիպում է ցեղային «համեսի» տարերքին: Կախված նրանից, թե խառնվածքը ինչպիսի դիրքորոշման է մղում անձին՝ կոնֆլիկտային, թե ներդաշնակելի, մի դեպքում երկու «ես»-երի միջև ստեղծվում է անկամրջելի մի անդունդ, որի արդյունքում անհատը մատնվում է ներքին ողբերգության, խառնվածքն սկսում է աղոտանալ և, ի վերջո, անձը դառնում է սովորական եսապաշտ, անձնական փառասիրության գերի: Երկրորդ դեպքում երկու «ես»-երի ներդաշնակ ձուլումով կաղապարվում է ցեղատիպ մարդու հուժկու

---

[1] *Նույն տեղը, էջ 3:*

[2] *Տե՛ս **Ասատրյան Հայկ,** Հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ կառ. առընթեր թիվ 6 տպարան, էջ 17:*

անձնավորությունը: Այս բարեբախտ ձուլումով ահա կերպավորված է Նժդեհի էության կարևորագույն գիծը՝ նրա անհատականությունը»[1]:

Այսինքն, ինչպես հասկանալի է դառնում Հ.Ասատրյանի գնահատականից, Նժդեհի երկրորդ բնութագրիչը նրա հզոր անհատականությունն է: «Մենք գործ ունենք փոթորկալից անցյալի տեր մի անհատի, պատմական մի անձնավորության հետ, որն իր ժողովրդի վտանգի պահին դառնում է նրա մարգարեն, գուշակը, առաջնորդը...»:

Երրորդ: Ֆրագմենտարիզմ, որի մասին արդեն խոսեցինք: Ֆրագմենտարիզմի համաշխարհային տիտանը, անխոս, եղել է Նիցշեն, իսկ հայ իրականության մեջ՝ Գրիգոր Նարեկացին: Նժդեհը, նրանց օրինակով, ստեղծագործում է ոչ թե թելերով, որոնք հետագայում հանգույցների պետք է վերածվեն, այլ խտացված հանգույցներով: Ժամանակակից հոգեբանության տեսակետից մի փոքր լրացում կատարենք. Նժդեհի այս հատկությունը համահունչ է հոգեբանական մեկ այլ տեսության՝ գեշտալտ հոգեբանության մոտեցումների հետ: Գեշտալտը ընկալման ամբողջական հանգույց է, համապատկեր, որի շնորհիվ մենք արտաքին պատկերներն ընկալում ենք ոչ թե մասնակի, կտրտված, այլ ամբողջական պատկերներով, ինչը և հիմք է տալիս վերացարկման ու ամբողջական սիմվոլներով նոր՝ երևակայական պատկերների ստեղծման համար[2]:

Հետաքրքիր է, որ Նժդեհի մտորումներն ու կարգախոսները, որոնք ի վերջո դարձել են հանրաճանաչ ասույթներ, լիովին համապատասխանում են հոգեբանական մեկ այլ տեսության հիմնադրույթների հետ, որը, որպես այդպիսին, ձևավորվել է փոքր-ինչ ավելի ուշ՝ 20-րդ դարի 50-60-ական թթ-ին: Հումանիստական հոգեբանության[3] ուսումնասիրման առարկան մարդու սուբյեկտիվ, գիտակցական փորձն է, նրա ներաշխարհը, հոգևոր կեցությունը: Այս ուղղության հիմնական նպատակն է՝ հասկանալ մարդու էությունը, նպաստել նրա ներունակ հնարավորությունների ակտուալացմանը: Հումանիստական հոգեբանության մարդասիրությունը ոչ միայն նրա բարության, գթասրտության մեջ է, այլև նրա կարողության՝ օգնել մարդուն ինքնաիրականացնել իրեն, ներդաշնակություն մտցնել իր ակտուալի և պոտենցիալի միջև: Հումանիստական հոգեբանությունը լավատեսական դիրքորոշում ունի կյանքի նկատմամբ և հաղթահարելի է համարում կյանքի ընթացքում ծագած բոլոր դժվարությունները, այսինքն՝ այն, ինչը կազմում է Գ.Նժդեհի ողջ գաղափարախոսության հիմքը: Հումանիստական հոգեբանության հիմնադիրներից Վիկտոր Ֆրանկլը համոզված էր, որ «տառապանքի անխուսափելիությունը հնարավոր չէ հաղթահարել, բայց, այնուամենայնիվ, հումանիստական հոգեբանը

---

[1] *Հայրենիքի մարտիկ, 2-2009, էջ 4:*

[2] *ttps://hy.wikipedia.org/wiki/ Գեշտալտ հոգեբանություն, առ 23.01.2018:*

[3] *ttps://hy.wikipedia.org/wiki/Հումանիստական հոգեբանություն, առ 23.01.2019:*

դիմում է նրան իր ամբողջությամբ՝ մահվան և այլ վախերով, օտարացման հետ միասին՝ նպատակ ունենալով օգնել իրեն ընդունել այս ամենը, միաժամանակ չկորցնելով իր կյանքի իմաստը, սերը, հավատքը և պատասխանատվությունը իր սեփական կյանքի վերաբերյալ»[1]:

Կյանքի իմաստի արժեորումը մեծ տեղ է գրավում հումանիստական հոգեբանության մեջ: Կյանքի իմաստի արժեորումը պետք է դիտարկել մենակության, նույնականության, հեղինակության և իմաստի հիմնախնդրի համատեքստում: Ի դեպ, նույն Վ.Ֆրանկլի ներմուծած «էկզիստենցիալ վակուում» եզրը՝ կյանքի իմաստի կորուստը, որը ծագել էր հետպատերազմյան Ամերիկայում, արդիական է նաև Նժդեհի գաղափարներում, քանի որ նրա պայքարում ևս, ընդգծված չափերով, առկա է եղել պայքարն ամենաբարձր արժեքների և հեղինակությունների համար[2]:

Տառապալից մտորումներից հանկարծակի ծնվող վեհաշունչ բանաձևումներ. ահա Նժդեհի մտածողության արգասիքը: Նրա ասույթները պատկերավոր ընդհանրացումներ են՝ սինթեզ /համադրություն/ և ալեգորիա /այլաբանություն/՝ միասին վերցրած: Նրա երևակայությունը միշտ պտղաբեր է: Նրա ասույթները պայթուցիկներ են, որոնք հազարավոր սրտեր են հրդեհում: Երկարաշունչ չեն դրանք, որովհետև սրտի պոռթկումներ են: Ֆրագմենտար մտածողության և հոգեբանական այսպիսի եզակի հատկության նմուշները հեշտ է գտնել Նժդեհի գրեթե բոլոր, առանձնապես «Էջեր իմ օրագրեն», «Բաց նամակ հայ մտավորականությանը», «Որդիների պայքարը հայրերի դեմ», «Հիշիր պատերազմը» և այլ գործերում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ. Ա.Մ.Մխիթարյանը:

---

[1] *Հոգեբանությունը և կյանքը, հ.1, 2002, էջ 24-26:*

[2] *см. Психология с человеческим лицом: гуманистическая перспектива в постсоветской психологии /Под ред. Леонтьева Д. А.,. Щур В. Г., М.: Смысл, 1997, с. 23:*